ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«__»_____ 2010թ. N ____ - Ա

«ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՑԻԱՆԱԿԱՆ ՆԱՏՐԻՈՒՄ ՆԵՐՄՈՒԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 1995 թվականի դեկտեմբերի 29-ի N 124 որոշման 8-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Թույլատրել «Գեոպրոմայնինգ Գոլդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն արտադրական կարիքների համար մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ը Հայաստանի Հանրապետություն ներմուծել 1500 տոննա տեխնիկական ցիանական նատրիում:

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին, ՀՀ կառավարությանն առնթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝ սահմանված կարգով ապահովել «Գեոպրոմայնինգ Գոլդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներմուծվող տեխնիկական ցիանական նատրիումի ստացման, փոխադրման, պահեստավորման, պահպանության և անվտանգության պայմանների նկատմամբ վերահսկողությունը:

3.Սահմանել, որ Հայաստանի Հանրապետություն ներմուծված տեխնիկական ցիանական նատրիումը երրորդ կողմին վաճառելու դեպքում «Գեոպրոմայնինգ Գոլդ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է դրա մասին նախօրոք տեղեկացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությանը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանությանը՝ տրամադրելով համապատասխան տեղեկություններ գործարքի կողմի, վաճառվող ապրանքատեսակի և քանակի մասին։

4. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարին՝ 10-օրյա ժամկետում ապահովել «Գեոպրոմայնինգ Գոլդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տեխնիկական ցիանական նատրիում՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծման և վերջնական օգտագործողի հավաստագրի տրա-մադրումը։

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Գեոպրոմայնինգ Գոլդ» սահմանապակ պատասխանատվության ընկերության արտադրական կարիքների համար տեխնիկական ցիանական նատրիում ներմուծելու թույլտություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտության

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման անհրաժեշտությունն առաջացել է «Գեոպրոմայնինգ Գոլդ» սահմանափակ պատասխանատվության ընկերությանը արտադրական կարիքների բավարարման համար ապահովել տեխնիկական ցիանական նատրիումով, քանի որ այն Հայաստանի Հանրապետությունում չի արտադրվում:

2010թ. ընթացքում Ընկերության կողմից արդյունահանվող հանքաքարի վերամշակման աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է օգտագործել 1500 տոննա տեխնիկական ցիանական նատրիում:

Արմեն Մովսիսյան